



ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M.D. 202 W. 23d St. New York Խմբագիր, ՏՐ. Մ. Ս. Գաբրիելյան

Հանուր չափով վեհ. Կաթողիկոս Խրիմեան Հայրիկի ողջութեան նկատմամբ ցայսօր (Փետր. 14) ո՛ր և է գժբաղդ տեղեկութիւն երևան չեղաւ, ուրախ և կրնանք ապահով լինել թէ ԱՐԵՒԵԼԻԻ ուղղեալ հեռագիրն կեղծ էր, և գուցէ պաշտօնական թեւադրութեամբ սկսուած չարամիտ փորձի մի առաջին քայլն էր, զոր շարունակել չկարացին:

*
* *

Կ. Պօլսոյ մէջ Հայ Հայրենասէրք կարծես թէ թմրած են: ՉՍրբազան Ա. ըգեան պաշտօնանկ ընելու և լաւագոյն պատրիարք Ռի ընտրելու պատեհ ժամ է այժմ երբ Ս. Փէթէրգոսերկէն փոքր ինչ խստութեամբ կը նային Դրան և երբ Կլատսթըն յիշխանութեան է: Այս նպաստաւոր պարագայը կրնան վաղանցիկ լինիլ, ուրեմն պէտք է փութալ անոնցմէ օգուտ քաղել: Այս միջոցին կարող պատրիարք մի կրնար Տաճկահայոց բանտարկեալներուն և աքսորելոց գունդ մէկ մասին ազատութիւնը ձեռք բերել, և Ազգային Ժողով գումարելու արտօնութիւն ստանալ մինչդեռ գումարումներն իրրեւ ընդհատուած՝ ոչ թէ վերջացած կը նկատուին: Ուրիշ ո՛րքան կրթական, հոգային, առաջնորդական խնդիրներ կան որոց մասին

փոքր ի շատէ գոհացուցիչ կարգադրութիւններ ընել անհրաժեշտ է, և զորս ներկայ Պատրիարք ապիկար է ընելու:

*
* *

Համալսարանական ուսանող մի, որոյ մէկ յօդուածն հրատարակել մերժած էինք, ազնուաբար կը գրէ մեզ հետեւեալ ստղերն:

«Ղրկած յօդուածս արդարացի սլատառներով մերժած էք. գոհ եմ: Գալով այն խնդրոյն որոյ մասին իմ ուշադրութիւնս կը հրաւիրէք, սաչափ կ'ըսեմ առայժմ թէ շատ բնական էր որ Տիեզերական Միութիւնը այնքան շուտով և մի քանի մարդոց աշխատութեամբ միայն չիրագործուէր. և ոչ միայն բնական այլ և աւելի ապահով է որ կամայ կամաց մշտեքն հասունան և տրամադրութիւնք պատրաստուին: Նաև, եթէ առաջին առաջարկով յաջողէր, գուցէ անյարմար ընտրութիւններ լինէին և յետինն չար լինէր քան զառաջինն: Խնդիրն երկար քննելով մարդիկն ալ երկար քննած կը լինիմք և երբ վերջապէս ընտրութեան ժամըն հասնի, կարող կը լինիմք յարմարագոյններուն վերայ միացունել քուէից առաւելութիւն:»



HAÏK

Entered as second-class mail matter at P.
O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St.
New York U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն :

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը
բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատա-
րակուի ամիսն երկու անգամ :

Տարեկան բաժնեգինն է ամեն երկ-
րաց համար երկու տոլար կամ 10 Ֆրանք
Կանխիկ

ԲՈՎՆԵՆԴԵԿՈՒԹԻՒՆ

Չարմողիւն ձեռքը դալար — Մեր
Գործ և Մեր Գործիչք — Ժամանակ է Գոր-
ծելու — Գարեգին եպ. Սրուանծտեանցի Նա-
մակն — Նամակ Եգիպտոսէ, — Ամերիկայի
Հայերն, վեց տարի առաջ և այժմ. — Հայ
ընտանեկան բանաստեղծութիւն. Ակնցոց Օ-
րօրի Երգ. — Ազգային լուրեր. — Տեղական
լուրեր. — Քաղաքական Լուրեր.

Կը ինդերեմք որ մընի օրտքրի կոմ
մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեա
նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց
բաւաքի թղթատան: Այսպէսով մեծ
դիւրութիւն ընծայած կը լինին մեզ :

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-
լարով, անունն ալ Հայերէն գրելով: Կը
կազմեն ամեն չուրիչ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր:

ԶԱՐՆՈՂԻՆ ԶԵՌՔԸ ԴԱԼԱՐ

Ա.

Հայ Ազգն արդէն ուրիշ կէս-քաղա-
քակիրթ ցեղերէ չարչարուած տկարացած
էր երբ Թրքին ձեռքն անցաւ, այնպէս որ
Թրքական բռնապետութեան տակ ճըմ-
լուած մնաց դարերով անբաւարար, ան-
շարժ, իբրեւ անկենդան: Կը հարստահա-
րէին ու նա չէր բողոքէր, կը վերաւորէին
ու նա չէր ճչէր:

Եկաւ Խրիմեան Հայրիկ ու ըսաւ—
Չաւակա մեռած չէ: Նստաւ նորա ան-
կողնոյ քով, չփեց նորա ճակատ 40 տարի,
իր սիրոյ մատներէն ելեքտրականութիւն
անցաւ նուաղեալին: Եկաւ Գամառ-Քա-
թիկա ու առնական շեշտերով երգեց
յունկն նուաղեալ Հայութեան: Եկաւ
Ներսէս և ի լուր Եւրոպայի «Դարման կ'ոս-
գեմ հիւանդիս» գոչեց: Եկան և եղբայր
ներ ու հիւանդին թեւէն բռնած՝ «եկի՛ր»
կանչեցին. և հիւանդն սթափեցաւ, ելաւ
նստաւ:

Նայեցաւ շուրջ և տեսնելով զՄասիսը,
հառաչեց—Իմ գլուխս է այս:

Տեսաւ զՎան, զՄուշ, զԲաղէշ, զԿա-
րին և ըսաւ—Իմ անդամներս են առոնք:

Տեսաւ զԵփրատ, զԵրասխ, զԿուր,
զՏղմուտ և ըսաւ—Իմ երակներս են առ-
ոնք:

Նա ճանաչեց ինքզինք:

Եւ աւելի ևս սթափելով ու ինքն իր
անդամոց նայելով ըսաւ ցաւագին—Արի՛ւն
է, արի՛ւն, ա՛հ, ոսկորներս կը ցաւին:

Տեսաւ զԹուրք, զԲուրդ, զՉէրքէզ
որք կը զարնէին իրեն, և խղճալի ձայնիւ
ըսաւ—Ինչ՞ու կը զարնէք:

Եւ դարձաւ Սուլթանին ու ըսաւ ա-
ղերսական շեշտով և խոնարհաբար—Հրա-
ման ըրէ, բարեգութ Սուլթան, թող
չզարնեն ինծի:

Եւ փառիշահն աղաղակեց բարձրա-
ձայն—Մի՛ զարնէք: Եւ դարձաւ քովի-
նին ու ըսաւ ցոծ ձայնով—Չարկէ՛ք:

Եւ Մեծ-Եպարքոսէն ցլեալին պաշտօն-
եայն արագապէս ընթացաւ շշուկն—Չար-
կէ՛ք:

Եւ Հայութիւնն դարձաւ Եւրոպայի
ու ըսաւ—Տե՛ս վէրքերս:

Եւ Եւրոպա խղճալով ըսաւ Սուլթանին—Պարտիս այլ եւս չթողուլ որ զարնեն խեղճին:

Եւ Սուլթանը պատասխանեց ---Պաշխուսթիւնէ:

Եւ ասոր վրայ Հարուածք սաստկացան կրկնապիլի:

Եւ Հայութիւնն սկսաւ աւելի սթափիլ ու մտածել ինքն իրեն ---Ա՛, կը հասկնամ . . . : Եւ աչքերն կարմրեցան: Եւ գլուխըն վեր բռնած ու կուրծքը տնկած ըսաւ բարկութեամբ--- Զ'պիտի զարնէք:

Եւ ընդունեց անգթագոյն եւս Հարուածներ գլխին ու կուրծքին:

Եւ Հայութիւնն բարձրացուց իւր վիրաւոր, իւր արինաթաթաւ բազուկ եւ գոչեց---Կը զարնեմ:

Եւ զարկաւ, և պահ ընդ պահ կը զարնէ դեռ:

Բ

Եւ ո՞վ է այն Հայը, լինի պաթրիարք թէ գործիչ, Հարուստ թէ իշխան, գիտուն կամ խեղճ որ յանդգնի իր Հպարտութեան բարձունքէն համբերութեան եւ խոհեմութեան քարոզ կարդալ Հայութեան, մեղադրել զարնողներն:

Նոքա որք ի Կարին, ի Սասուն, ի Զէյթուն, ի Կ.Պոլիս, յԱրաբկեր եւ ուրիշ տեղեր զարկին, այո՛ սկարութեամբ զարկին, անկանոն կերպով զարկին, եթէ կամիք՝ անխոհեմութեամբ զարկին ---բայց իրաւունք չունիք զնոսա մեղադրելու, իրաւունք չունիք անոնց վերայ գոռոզանալու:

Դուք, հանգստութեան մէջ ընկզմած պահպանողական եւ խեղճ Հայեր, դուք պարտիք ընդունիլ թէ իրենք զիրենք չկարենալով զսպել մռտող ու զարնող Հայերն այնքան արդար են որքան իրենք զիրենք զսպող ու մռող Հայերն են խոհեմ:

Պարտիք ընդունիլ մինչև անդամ եւ զա՛յն թէ զարնող Հայերն, իրենց բոլոր անխոհեմութեամբ հանդերձ, պատիւ կը բերեն Հայութեան, գոնէ այնքան պատիւ որքան չզարնողներն իրենց խոհեմութեամբ:

Դուք մանաւանդ որ Եւրոպացւոց մէջ կ'ապրիք, չգիտէ՞ք թէ յաջս Եւրոպայի ո՛րչափ նախատեսլիկ պիտի չեն հայ

Ազգը եթէ չգտնուէին գոնէ սակաւաթիւ անխոհեմներ որ ճիկ հանէին, բողոք բռնային, ձեռք վեր առնուին իրենց անզգամ Հարստահարչաց դէմ:

Ես ձեզ համարձակ կ'ըսեմ որ եթէ այն Հարունակ ու անտանելի Հարստահարութեանց տանէին Հայերն առանց ընելու առնական ցոյցեր դժգոհութեան, ---եթէ այն ամեն ընտանեկան անպատուութիւններ, այն կրօնային բռնութիւններ, այն պաշտօնական հալածանքներ, այն անդար կողոպտումներ յանձն առնուին անմոռնչ, ---Հայութիւնն արժանի կը լինէր իւր սեւ բաղդին, արժանի կը լինէր իբրեւ անբան անասուն Հարչարուելու:

Անասուն ըսի. շատ է այդ: Անասուններ ալ կ'ապստամբին իրենց բռնաւար գործածողաց դէմ:

Ի՛նչ, խոհեմներ, կ'ուզէիք որ Հայք նուազ զգայուն լինէին, արժանապատուութեան եւ արդարութեան նուազ կիրք ունենային քան զանբան անասունս իսկ:

Եւ դուք, Սրբազան Պատրիարք, խոհեմներու խոհեմագոյնը, ինչ կ'ընէք, ինչ կոնդակներ կը յղէք տառապեալ, Հարչարեալ, տքացող Հայութեան:

Զե՛ր Թագրիւրներու շնորհիւ միթէ Դուռն պիտի փոխէ իւր ընթացք, Զեր պատրիարքական Թագրիւրներու զորս եթէ համարձակիք իսկ տալ, կը նկատուին յաջըս թուրք բռնապետութեան իբր նոյնքան պարապ թուղթ:

Կամ Զե՛ր պատրիարքական կոնդակներու շնորհիւ պիտի հանդարտի այն Հայը զոր Բ. Դուռը այնքան Հարաչար կը գրգռէ իր անիրաւութեամբ, իր ծաղրելովն ամեն օրէնք, իւր յայտնի, անամօթ կոխտեսլովն անմեղներու իրաւունքը:

Կը լսեմ ձեր առարկութիւն. ---անխոհեմները կը զարնեն եւ պատուհասը բոլոր ազգը կը կրէ:

Իրա՛ւ է, ամեն անգամ որ Հայութեան բարկացած ձեռքը կը բարձրանայ ու կը զարնէ, Սուլթանի կառավարութիւնը ոչ միայն զարնող ձեռքը այլ եւ ամբողջ մարմինը կը շարժարէ, ---ոչ միայն հետադարձ Հայերն այլ եւ Հայ Ազգը, քանզի կը նկատէ թէ այն մասն որ կը զարնէ, չզարնող մեծամասնութեան զսպեալ տրամադրութիւնը կ'արաւայայտէ:

Եւ որքան աւելի նեղէ Դուռը այն մեծամասնութիւնը որ կը համբերէ, այնքան

աւելի Հայութեան մէջ արդարութեան կերբը պիտի բորբոքի:

Արդէն Տաճկահայոց զանգուածը յոյժ տարբեր է տասն տարի առաջ եղածէն:

Հայութեան մեծ մարմնոյն մէջ այնպիսի ոգի մի կը զօրանայ որոյ շնորհիւ նա տարբեր ազդեցութիւն կ'ընդունի անիրաւ հարուածներէ. հարուածն առաջ կը ճմլէր զնա, այժմ կը գրգռէ, առաջ կը փշրէր, այժմ կը խտացունէ կը միացունէ և կը տաքցունէ. և եթէ հարուածք չարունակեն, օր մի պիտի գայ որ Հայութեան Զերմութիւնը փայլող և այրող աստիճանին պիտի հասնի: Յայնժամ աշխարհ ընդհանուր հրդեհում մի տեսնէ Օսմ. պետութեան մէկ մասին մէջ:

Գ

Սրբազան Պատրիարք և ամենայն դասք խոհեմաց, ինչու ամեն բան կը խորհիք ու չէք կրնար խորհիլ թէ այլ ևս անհնար է Դրան և Հայութեան միջև խաղաղ յարաբերութիւն վերահաստատել:

Հայ Ազգն ինկած է նոր շաւղի մի մէջ որմէ դուրս ելնել և հին շաւղին մըտնել անկարելի է նմա: Թէպէտ բաղձալի լինէր, չպիտի լինէր կարելի:

Եթէ իրօք խոհեմ էք, պարտիք ընդունիլ կատարուած իրողութիւններն: Եթէ կը կարծէք իսկ թէ ոմանց անխոհեմ անհամբերութեան պատճառաւ յառաջ եկաւ Ներկայ ահաւոր վիճակը, դարձեալ ստիպուած էք ընդունելու թէ ինչ որ եղած է եղած է: Այսօր Հայութիւնը կեցեր է Մահու և Կենաց առջև:

Փախստի ճամբայ չկայ:

Եթէ Հայոց մէկ քանին նեղուէին, կրնայիք ըսել թէ իրենց անխոհեմութեան պատիժը թող կրեն. ամբողջ Ազգն է որ կը չարչարուի:

Ճանաչայ ելեր ենք, պէտք է երթանք մինչև ծայրն:

Զլինինք նման այն Իսրայէլացւոցն որք զիրենք ի Քանան առաջնորդողին դէմ դառնապէս գանդատեցան երբ ճանրու նեղութիւններ կրեցին: «Ի՞նչու եգիպտոսէն մեզ հանեցիր» կը քրթմնջէին դժգոհներն:

Բայց չեմ ուզեր մեր ժողովուրդն նմանցնել Իսրայէլի: Ժողովուրդը չգանգաւոր. Պատրիարքն է գանգատողը:

Պատրիարքն է որ ահիւ ու գողով լեցուած կը գանգատի թէ ինչու ժողովուրդը եգիպտոսէն ելած է ի Քանան երթալու յուսով:

Բայց, լաւ գիտնաք դուք Սրբազան Աշըգեան, թէ ժողովուրդը եգիպտոսէն ելաւ, Քանանի շաւղին մէջ մտաւ Խրիմեանի, Ներսիսի նման առաջնորդաց շնորհիւ. և դուք կամ պարտաւոր էք յառաջ տանիլ ժողովուրդը յանուն այդ անցեալ պետերու կամ քաշուիլ:

Եթէ դուք Ձեր կոչումը — փառաւոր կոչումը — յարգէիք, հրաժարած կը լինէիք ցարգ:

Ի սէր Հայութեան, հաճեցէք հրաժարիլ այժմ գոնէ, երբ յոյս կայ թէ ժողովուրդը կրնայ ընտրել աւելի արժանաւոր պատրիարք մը:

ՄԵՐ ԳՈՐԾ

ԵՒ

ՄԵՐ ԳՈՐԾԻՉՔ

Ի՞նչ է իսկութիւնն մեր «Սուրբ Գործին»: Ամեն ոք գիտէ զայդ — թէ և տարբեր ձևերով բացատրէ. մէկը պիտի ըսէ Թուրքիոյ Հայկական Փառառաց վարչական բարեկարգութիւնն է, կամ Պէտլինի 61դ. յօդուածին գործադրումը, ուրիշ մի՝ աւելի ընդհանուր խօսքով՝ պիտի ըսէ Հայոց յառաջդիմութեան նպաստաւոր վարչութիւն մի հաստատել ի Հայաստան:

Եւ ի՞նչ միջոցով կրնանք ընել զայդ: Ոմանք պիտի ըսեն՝ դիւանագիտական դիմումներով, այլք՝ բուռն միջոցներով կամ հայկական ապստամբութեամբ. եւ դեռ ուրիշներ ալ պիտի պատասխանեն թէ երկու կարգի միջոցներն ալ պէտք է գործածուին:

Դիւանագիտական դիմումներով մեր խնդրոյն լուծումը ձեռք բերելու կերպին հետզհետէ աւելի քիչ կարեւորութիւն կը ստուի. չատեր բոլորովին կամ գրեթէ բոլորովին զուր վաստակ կը համարին դիւանագիտական միջոցներու տրուած ժամանակն ու ոյժը:

Պէտք է նկատել թէ դիւանագիտա-

կան միջոցներու հետ կ'երթայ ուրիշ աշխատութիւն մ'ալ — այն է Եւրոպայի մէջ Հայերն աւելի ծանօթ և համակրելի ընելու աշխատութիւնը որ յօգուածներու, գործերու և հրապարակաստութիւններու միջոցաւ կը կատարուի։ Աշխատութեանց այդ բովանդակը խոտելի և անօգուտ չէ բնաւ որպէս ոմանք կը թուին ենթադրել։ Մենք չենք կարծեր թէ Մինաս Չերազ անօգուտ գործ մի կ'ընէ ի Լանտոն հրատարակելով թերթ մի, ընելով բանախօսութիւններ Հայոց վերայ և երբեմն ալ դիւանագիտական թղթակցութեանց զբաղելով։ Ընդհակառակն, նորա աշխատանք գնահատելի է և համակրելի։

Չերազի գործունէութեան մասին միայն մէկ քննադատութիւն ունինք ընել։ Նա իր բոլոր ոյժ կուտայ արտաքին աշխատութեան։ Ե կ'ըսէ ալ թէ ինքն իւր պարտք կատարած կը համարի այդու թող ուրիշներն ալ ներքին գործը յառաջ տանին։

Իրաւունք պիտի տայինք և մեք Չերազի այդ յայտարարութեան եթէ ուրիշ Չերազներ ալ ներքին գործովն զբաղեալ տեսնէինք. բայց քանի որ համոզուած կը մնանք թէ ներքին գործոց չըմանին մէջ աշխատութիւնք անգոհացուցիչ կերպիւ յառաջ կ'երթան, և թէ ինքն կրնար աւելի օգտակար լինիլ եթէ օգնէր ներքին գործերն բարւոք ընթացքի մէջ մուծանելու, ի հարկէ չենք կրնար չցաւիլ տեսնելով որ նա իւր բոլոր ոյժերն նուիրած է արտաքին գործոց։

Եթէ Չերազ աշխատէր կիւրոն մի կազմակերպելու գործոյն, և ունենայինք շուտով Համահայկական Միութեան կեդրոն մի առաջնակարգ գործիչներէ բաղկացած, յայնժամ ինքն ալ աւելի հանդարտ խղճով կրնար, իբրև անդամ իսկ այն կեդրոնին, նուիրել իր ոյժերուն մէկ մասն ալ արտաքին գործոց։ Բայց ի՞նչպէս կրնայ իւր հայրենասիրութիւն գոհ մնալ տեսնելով ներքին գործոց չըմանը այսպէս խառնաշփոթ և գրեթէ անկերպարան վիճակի մէջ և ի գործ չդնել իւր բոլոր ոյժ և ազդեցութիւն ի նպաստ կազմակերպութեան։

Միթէ պէտք կայ որ իրեն ուրիշ որ և է ոք բացատրէ թէ վերջապէս մեր գործ մեք պիտի կատարենք, մեր գաւառաց բարեկարգութիւնը մեք գրեթէ բըռ-

նի ընել պիտի տանք։

Արտաքին աշխատութեան այն մասը որ հանրային կարծիքը չինելու վերաբերեալ է, օտարապի գործներ, թերթեր, հեղինակներ, ճամբորդներ ալ կը կատարեն, և ընդհանրապէս լաւ կը կատարեն։

Արտաքին աշխատութեան դիւանագիտական մասին գալով, այդ ալ այնպիսի բան մէ որ երբեմն երբեմն յարմար պատեհութիւն մի գործածելէ կը բաղկանայ, ինչ որ կարելի է ընել առանց բոլորովին սահմանափակուելու արտաքին շրջանին մէջ։

Այնպէս չէ գործոց ներքին մասը, որ զլիաւոր գործն է, և ամենէն դժուարն ու փափուկը, մանաւանդ մեր ազգին համար։

Գուցէ ոմանք գոհակիւն երբ կ'ըսենք թէ ներքին գործերն բարւոք ընթացք չունին։

Միթէ այնպէս չէ՞ թէ՞ Տաճկաստանի մէջ և թէ՞ ի գաղթականութիւնս։

Ազգային երեսփոխանական ժողով չմնաց։ Սահմանադրութիւնը ձեռքէ գընաց։ Պատրիարքական գահն իջաւ պարզ անուանական պաշտօնի, առանց ուժի, առանց կարեւորութեան, մանաւանդ շնորհիւ Աշքեանի։ Գոնէ կրթական գործն առաջ տարուէր մասնաւոր ընկերութեանց ձեռքով. այդ ալ չլինիր։ Միացեալ Ընկերութիւնք իսկ, որ ամենէն մեծն էր, գրեթէ լուծուելու վերայ է, շնորհիւ Պատրիարքի այպանելի տկարութեան և թուլութեան։ Եւ ժողովուրդն ալ կարծես թէ թմրած՝ այլ ևս դժգոհութիւն ալ չյայտնեւ այդպիսի փաստակար ազգապետի դէմ։

Հնչակեանք որք ներքին գործին բոլոր ուժով փաթթուած են, ունին թէ և շատ համակրելի կողմեր, բայց ունին նաեւ բան մի որ շատ կ'աւրէ ամէն բան։ Հայաստանի ազատութեան խնդրոյն վերայ խօսելու տարօրինակ կերպ մ'ունին՝ մասնաւորապէս ՀնՁԱԿ թերթը, իբր թէ Ընկերավարականութիւնը աշխարհէս ամեն անկարգութիւն հարստահարութիւն եւ չարիք բառնալու հիմնական դարմանն լինէր, և այդ խնդրոյն կուտայ իւր բոլոր ոյժ իբրև ամենայն խնդրոց ոգւոյն ու իսկութեան։ Ըսինք թէ Հայկական ընկերավարականութեան վերայ խօսելու ժամանակ չէ այժմ, և միայն ու միայն ընկերավարա-

կանութեան վերայ խօսիլ ժամանակ վատնել է :

Չէ՛, ժամանակ վատնել չէ, կը պատահանեն, այժմէն պէտք է հասկցունել, որպէս զի հոն չարիքը դեռ չգոյացած երկրին օրէնքներն ընկերվարական լինին և յետոյ հարկ չմնայ չարիքը դարմանելու :

Ողջ մտութիւնը կ'արգիլէ զմեզ յուսալէ թէ Հայաստան բոլորովին անկախ երկիր մի կրնայ լինիլ, երբ մեր խնդիր ընդունելութիւն գտնէ ո՛ր և է միջոցով : Սաչափն յայտնի կ'երևի թէ Հայկական Գաւառներն նախ բարեկարգութեան շրջանն պիտի մտնեն, երբ մտնեն, լինելով կա՛մ Թուրքիոյ, կա՛մ Ռուսիոյ, կա՛մ Անգղիոյ վեհապետութեան ներքեւ, վերջին պատահականութիւնն լինելով ամենէն բաղձալին :

Յայնժամ Հայեր ո՛չ արտօնութիւն, ո՛չ կամք և ո՛չ յարմարութիւն պիտի ունենան իրենց Գաւառներուն ընկերվարական կազմակերպութիւն աալու :

Գիտութիւնն ու իմաստասիրութիւնը կ'արգիլեն, միւս կողմանէ, ընդունելութէ ընկերվարականութիւնը լինի ընկերային չարեաց ազդու դարմանն կամ խափանարարն : Ընկերվարականութիւնն — որպէս նորա վարպետներն կը հասկուցունեն, և որպէս ՀՆՁԱԿ կը հասկցունէ զայն — վերջին աստիճան յանդուգն դրութիւն մ'է, մասնագէտ քաղաքատնտեսագէտներու մէկ ծայրայեղ թէորիմ կամ հայեցողութիւնը, որ խղճալի կերպիւ վրիպած է մարդկային ցեղին պատմութիւնըն ու մարդու բարոյական ու Փիզքական կազմութիւնն և զարգացման օրէնքներն, գործելու մարդկային բարդ շարժառիթներն, չարեաց զանազան աղբիւրներն ու դարմաններն ի հաշիւ առնէ : Մենք անցեալ տարի միանգամ ցուցինք «Հայք» ի մէջ (Տե՛ս Թ. Բ.) թէ ընկերվարականութիւնը հակագիտական և հակաիմաստասիրական է, բայց կ'երեւի թէ մեր ՀՆՁԱԿ եղբայր պատճառ ունի այդպիսի յոգուածներու պատասխանելէ խոյս տալու :

Կայ նաև «Հայոց Հայրենասիրական Միութիւն» կոչուածն որ ներքին գործով զբաղելու կոչում կը կրէ, բայց այդ Միութեան վերայ խօսիլ աւելիլաւ է, մանաւանդ ամենէն անկեղծ խրատն ալ՝ մեր կողմ

մանէ տրուելով՝ թշնամական այժմ կրնայ թուիլ, քանի որ մեր խրատներն դժպշի երեցան նմա նոյն իսկ այն ատեն, 1889ին, երբ այդ Միութեան ի նպաստ կ'աշխատէինք եւ մտերմօրէն խորհուրդ տուինք թէ ինչպէս պէտք էր աւելի հաստատուն հիմանց վերայ վերակազմել զայն ու զօրացունել : Ժամանակն հետզհետէ աւելի յստակ պիտի ցուցնէ թէ մեր այն խրատ բարեկամական ու յարգելի էր, զոր մերժել և իբրև թշնամույ հայիլ մեզ՝ ահագին սխալ մ'էր, թէև գիտենք թէ Փորթուգալականի միտքը չըփոթեցնելու աշխատող մի քանի անխիղճներ մեծ դեր կատարեցին . . . :

Իբրև եզրակացութիւն կ'ըսենք

(1) Մեր ներքին գործոց ընթացքն անգոհացուցիչ է :

(2) Պէտք է մեզ Համահայկական Միութեան մեծ կեդրոն մի ուր գործիչներ գործակից լինելով իրարու վստահելիութիւնն ու ոյժն աւելցունեն և գործեն Սուրբ Գործն ըստ արժանւոյն :

(3) Որպէս զի այդպիսի Միութիւն մի իրագործուի, պէտք է որ Գործիչք կամ Պետք ճանաչեն թէ ամենքն ալ սխալական են և ամենքն իրարու ներելու պէտք ունին — թէ իրարու կարծիք ու համոզում յարգել պարտին, ոչ մին ինքզինք շողոքորթելու է թէ ինքն հասու եղած է բացարձակ ճշմարտութեան և թէ կը ծառայէ անսրբագրելի քաղաքականութեան — վերջապէս՝ թէ իրարու աջակցութեան, համակրութեան և խելքին կարօտ են :

Եղբայր գործիչներ, խոնարհաբար կ'աղաչեմ որ ի սէր Հայրենեաց Համոզուիք թէ ձենէ ամեն մէկը չ'ունի առանձին ամեն ինչ որ պէտք է, և թէ Հաստատէր մերձեցմամբ ու սիրալիր միութեամբ է որ պիտի կրնաք մեծ զօրութիւն մի յօրինել մեծ գործն յառաջ տանելու համար :

Հաւատացէք թէ այս խօսքեր անկեղծ ու համակիր սրտէ կը բղխին և հաճեցէք Միութեան խնդիրն լուրջ նկատողութեան առնուլ :

ԺԱՄԱՆԱԿ Է ԳՈՐԾԵԼՈՒ

Չմեղադրենք զանոնք՝ որք տակաւին մարած ազգասիրական ոգւով մը կ'ընեն սա հարցումն՝ թէ ժամանակ է Ազգին համար գործելու, այլ կարեկցաբար ցոյց տանք նոցա թէ այո՛, ժամանակ է։ Այլ ևս յապաղելու և վարանելու առան չկայ։ Զարթի՛ր, իմ արեւնակից, դարձուր մի անգամ քո աչք դէպ ի Հիւսիս, Հարաւ, Արեւելք և Արեւմուտք։ Գրեթէ ամբողջ Հայութիւնը շարժման մէջ է։ Թուրքիոյ մայրաքաղաքէն սկսեալ մինչև փոքր գիւղակն ուր կը գտնուի մի Հայու տնակ, արդարութեան բողոք կը բարձուի։ Որչափ կը ծանրանայ միապետական լուծն, այնչափ կը խտանայ ներքին զօրութիւնն, որոյ բնական արդիւնքն է պայթում՝ առանց նկատելու ժամանակն ու տեղն։ Հոս «փոլիս» մը շան սաստակ կը հանեն, հոն բանտի մը վրայ յարձակելով անմեղ բանտարկեալներ կ'արձակեն։ ուրիշ տեղ մը, գայմագամը լաւ մը կը թրջեն, ևն։ Երբեմն «ճահել»ներ միայն կը գործէին, իրաւանց պահանջման ցոյցեր կ'ընէին, իսկ այժմ մեծ ու պզտիկ։

Չն՞ լսեր այն սրտառուչ հեծեծանաց ձայներ որք կը բարձրանան Թուրքիոյ գերեթէ ամեն քաղաքի աղտոտ ու նեխոտ բանտերէն։ Այդ մահաբոյր բանտերու մէջ կը փտին այժմ մեր սիրելեաց շատեր։ «Սրիկաներ» չեն նոքա, այլ սխրալիներ։ Միայն երիտասարդներ չեն, այլ և Ազգին նշանաւոր հարուստներէն և ուսումնականներէն են։ Կան բանտերուն մէջ դրամատեսարք որք իրենց տեղւոյն տնտեսական շարժման դեակը կը վարէին։ Կան քաղաքագէտ անձինք որք առաջ պատուաւոր պաշտօններ կը վարէին կառավարութեան մէջ։ Կան դաստիարակեալ երիտասարդք, որք Ազգին նորաբոյս սերունդոց բարոյական հաց կը ջամբէին։ Կան նշանաւոր արհեստաւորք որք բարձր գիրք ունէին ընկերութեան մէջ։

Եւ տակաւին օսմանեան կառավարութիւնը կը շարունակէ նորեր բանտարկել։ քաղաքաց և գիւղից մէջ աւերումներ կը գործուին, Բիւրտք իրենց դեր կը կատարեն ազատութեն, «Համիտիյէ Հեծելազօրաց» կազմակերպութիւնը յառաջ կ'եր-

թայ բուն Հայոցս դէմ, և դուն դեռ կեցեր կը հարցնես թէ՛ ժամանակ է գործելու։

Արթնցէք, արթնցէք, Հայեր, ժամանակ է գործելու, բայց անշուշտ ամենայն լրջութեամբ գործելու։ Անհատ անհատ ցրուած, ի՞նչ կրնանք ընել։ այնպէս գործ երբէք յառաջ չերթար։ Միութիւն պէտք է։ Կը գովեմ, տէր խմբագիր, ձեր քարոզած Կեդրոնական Միութեան գաղափարը։ Միութեան մէջ կայ զօրութիւն, յաջողութիւն, յաղթութիւն։ Երբէք Ազգին գործը մի՛ վստահիք անհատի մը։

Այս պահուս այդ միութիւն Հաստատեալ լինելու էր, որպէս զի քաջալերութեան ձեռք երկնցունէր մեր խեղճ բանտարկելոց՝ լինելով Ազգին ամենայն կերպով ներքին զօրութեանց շտեմարան։

Ուրեմն գործենք, ժամանակ է գործելու, և գործենք թողորս ի միասին։

Շիքակոյ, 1 Փետր. 1893 ՆՈՐ ՀՈՒՐԴ

Յ. Գ. — Ո՛վ պատուարժան ազգայինք, արդեօք չէ՞ կարելի օգտիլ Շիքակոյի մէջ տեղի ունենալիք Աշխարհահանդէսէն և ձեր պատկառելի ներկայութեամբ ու սուր հեռատեսութեամբ այս ազատ երկրի մէջ հիմնադրել Համահայկական Միութիւն մը, կեդրոնատեղին ընտրելով յԵւրոպա կամ այլուր։

ՆՈՅՆ

ԳԱՐԵԳԻՆ ԵՊ. ՄՐՈՒԱՆՁՏԵԱՆՑԻ

ՆԱՄԱԿ

Իբր նմոյշ Սրունաճտեանցի նամակագրական ոճոյն և իբր ցուցիչ նորա քրիստոնէական լայն հայեցողութեանն՝ կը հըրատարակենք նորա մէկ կարեւոր նամակն զոր ասկէ 9 տարի առաջ ուղղած էր մեզ ի Փարիզ։ Նամակին ինչ ինչ մասերն որք մեր անձնականին կը վերաբերին և ողջոյններն զորս կը յղէ այն ժամու հայ ուսանողաց ոմանց ի Ֆռանսական ոստանին, կը յապաւենմք։

Սիրելի Բարեկամ,

Կտրիճ ես։ վերջապէս Փարիզ ես այժմ։ յաճախ հարցուցած էի, այս ան-

գամ ալ Ձեր պատուական նամակաւ լսեցի Ձեզ և Ձեր վրայօք:

... Հիացմամբ նկարագրած էք Փարիզը, և կը հիացնէք ընթերցողը. աւելինը կար. կը կոչէք. դիւ և Ա. Էֆ., շատ զուարճացանք. յաճախակի մեր աչքերն զբօսան նկարագրեալ Փարիզից տեսարաններով, և քանի մը անգամ Ա. Էֆէնտիի հետ ճամբայ ելանք գալու, բայց... դեռ հոս ենք:

Ձիս զմայլեցնող մասն Ձեր նամակին՝ վերոյգրեալներն չեն, այլ այն՝ թէ Խումբ մը ազնիւ հայեր գտած էք այդ տեղը և իրենց շարաթական համախմբուելուն մէջը մտած էք. խօսք տուած էք Արմէնիոյ նկարագիրն ընել անոնց(1): Հարցման մը պատասխանելով ըսած էք թէ ազաւ՝ «Հայաստանեայց եկեղեցի է» Հայ. եկեղեցին, ոչ յունական է և ոչ Հռովմէական: Դուք, ուրեմն այդ տեղը հայրենեաց պաշտօնէութիւն կը վարէք: Նախ կ'ողջունեմ ձեր աշխոյժ հայրենասիրութիւնը, կ'ողջունեմ և տեղւոյդ Հայկական խումբը. օրհնուին և թող քաջալերուին այդ պատուաբեր ընթացքի մէջը:

Հայաստանեայց եկեղեցւոյ վրայ խօսելու համար ընդարձակ էջեր պէտք են. բայց համառօտակի մի քանի կետերը յիշելով՝ կրնաք դուք ընդլայնել: Պատմութիւնը գիտէք: Արդէն «Հռովմէական» կամ «յունական» կոչումները նախնական չեն եկեղեցւոյ համար: Եկեղեցին ոչ Հռովմայեցւոց է և ոչ Յունաց, այլ Քրիստոսի, նոյնպէս և ժողովուրդն՝ որ կը կազմէ իսկական եկեղեցին, անուանուած է քրիստոնեայ: Հետ զհետէ դարեր ու քաղաքականութիւնները զանազան ձեակերպութեանց ենթարկեցին գոյութեանը, երկիրները, և ըստ այնմ արտաքին կոչումներ ստացաւ եկեղեցին: Ի նախնումն՝ եկեղեցի թեոագենիկեցւոց, եկեղեցի անտիոքոյ կամ Աղէքսանդրիոյ ևն. քաղաքականութեան հետ կեդրոնացան Հռովմայ անուանը տակը. հոսկ ուրեմն Փոքր Պարս. Յունաց բաժնեց յունական եկեղեցին, երբ վաղուց արդէն կայսրութիւնը Բիզանդիա փոխադրուած էր: Հարկ է յիշել

(I) Խումբը Փռանսացի ուսանողներէ կը բաղկանայր, որոյ միակ հայ անդամն էինք մեք. Սրուանձտեանց սխալ ենթադրութիւն մ'է ըրած հայկական կարծեւով զայն: Գ.

Ժողովները, մանաւանդ չորրորդ անուանեալ Ժողովն Քաղկեդոնի, յորմէ սկիզբն առնելով ելեւէջ ընելու և մէկ զմէկ պարսաւելու, նախապատուութիւնը խլելու շարունակութիւն մը կը տեսնուի, հանդերձ պէս պէս հերձուածներով, և զիրար նզովելով: Իսկ Հայկական եկեղեցին՝ ծանօթ Աբգարու օրերէն, դեռ Քրիստոս ի մարմնի երկրպագութիւն սկսած էր նուիրել, և այն ինչ Առաքեալք Հրէաստանէն դուրս չեկած, Թադէոսի գալստեամբ, աւետարան ուսած էին, եկեղեցի, եպիսկոպոս, կոյս նահատակք ունէինք, որոց շարունակութիւնը հասած է մօտ 300 թուական Փրկչին, Բարդուղիմէոս և այլք յառաքելոց, որոց քարոզութիւնը, նահատակութիւնը և աշակերտք ի պատմութեան յայտնի. Ոսկեանք, Սուքիառեանք, և յանուանէ վեշտաւան եպիսկոպոսունք ցԱ. Գրիգոր Լուսաւորիչ: Որքան և ընդհանուր լուսաւորութիւն Ս. Գրիգորի ձեռամբ եղած է, այլ ցայնվայր եպիսկոպոսք՝ զոր յիշեցինք, անշուշտ ունէին իրենց հօտ և ժողովուրդ, ուստի, ինչպէս ըսած էք, Հայաստանեայց եկեղեցին ոչ Հռովմէն և ոչ Յայնէն ուսած ու առած է իւր քրիստոնէութիւն և հաւատոյ դաւանութիւն, այլ ուղղակի Թադէոս ու Բարդուղիմէոս Առաքեալներէն, և ապա Նիկիոյ, Եփեսոսի և Կ. Պօլսոյ Ս. Ժողովոց հանգանակ հաւատոյ՝ իւր ունեցած դաւանութեան համաձայն գտնելով, ընդունեց է իբրեւ մի, սուրբ, կաթողիկէ և առաքելական եկեղեցի:

(Ապա կը յիշէ Սրբազան թղթակիցը թէ ինչպէս Հայ եկեղեցին հեթանոսաց արշաւանաց և քրիստոնեայ եկեղեցեաց, Հռովմէականին և Յունականին, յարձակմանց դէմ դերս է դարերով):

... Գալով բուն հաւատոյ հիմերուն, Հանգանակը կը բովանդակէ զանոնք. (և աստ ի մէջ կը բերէ Հանգանակը. և վերջապէս կը յիշէ աղօթք, պահք, ողորմութիւն և այլն, բայց բնաւ չըջափեր ուղակի այն հարց, որ մեր բուն խնդիրն էր, թէ Յունական եկեղեցիէն ի՞նչ բաներու մէջ կը տարբերի Հայկականն):

... Ահ, ինչ բաներ կան խօսելու, բայց չձանձրանաք, հերիք է: ... Յաճախ կը յիշենք Ձեզ, կը փափաքինք և կ'աղօթենք ձեր առողջութեան, յաջողութեան և վերադարձին:

ՍՐՈՒԱՆՑ. ԳԱՐԵԳԻՆ Վ.

ՆԱԽԱԿ ԵՊԻՊՏՈՍԻ:

Գահիրէ, 17 Յունվ. 1893

Բարի տարի՛: Տայր երկին որ այս տարի մեր ազգային իղձերն իրանալ ըսկըսէին, որ 1893 թուականը լինէր նպաստաւոր տարի մը մեր սուրբ դատին համար:

«Հայք» պատուական թերթին 1893 ին ևս շարունակուելուն լուրը Գահիրէի մէջ ալ ճշմարիտ ուրախութիւն պատճառեց, քանզի «Հայք» ը բազմաթիւ համակիր ընթերցողներ ունի հոս, թէև բաժանորդաց թիւը մեծ չէ գոթադղաբար: Այս համակիրանքն ալ գովելի է, բայց չեմ հասկնար ինչո՞ւ պղատոնական է դեռ և ոչ գործնական: Ուրիշ երկիրներու մեր հայրենակիցները հանգանակութիւն են բացեր «Հայք» ի ի նպաստ, և Գահիրէցիք կ'ուրախանան ասոր վրայ, բայց մէկը ոտքի չեններ հոս ալ այնպիսի հանգանակութիւն մը ընելու, թէև համակրողները և իրենց լուսման տալու յօժարամիտները քիչ չեն: Երբեմն կը հարցնեն ալ թէ եւրոպա ինչ կ'ըսէ մեր մասին, ինչ կ'ընէ պատուականն Չերազ: Չերազներուն ըրածները կ'ուզեն գիտնալ, բայց Չերազներուն օգնել չեն ուզեր...:

Ուրախութեամբ կը ծանուցանեմ ձեզ թէ՛ «Հայք» ի մէջ Եգիպտոսի կրթական գործոց վրայ հրատարակուածները ցնցեր են մեր ազգայինները, և շարժում մը ըսկըսեր է:

Գեր. Գէորգ Մ. վ. Իւթիւճեան, առաջնորդական փոխանորդ Եգիպտոսի, որ կը թուէր մտածել երկար ատենէ ի վեր ազգային վարժարանին վրայ, հրաժարեցուց զՊարոն Նաւասարդեան որ Պարոն Աղազարմեանի հրաժարումէն ի վեր աւագ դասատուն էր Խորէնեան վարժարանի: Կ'ըսուի նաև թէ Ռուսումնական Խորհուրդն ալ լուծուած է և Ս. Առաջնորդը իր վրայ առած է առ այժմ գործը: Ժամանակը չներեր որ երկարօրէն բացատրեմ պարագաները, բայց սաչափն ըսեմ թէ Նաւասարդեանի հրաժարումն ալ նոր առիթ մ'եղաւ որ շատերը Խորէնեան վարժարանի վրայ ծիծաղին: Հրաժարող ուսուցչին դէմ գործածուած միջոցները

չատ օրինական չէին, և ուստի նորա կողմնակիցները շատ դժգոհ մնացին:

Ի վերայ այսր ամենայնի կրնամ ըսել թէ Խորէնեան վարժարանը յառաջդիմութեան շաւիղը մտնելու միտած է: Նոր ուսուցիչներն գործունեայ և լաւ ուսեալ երիտասարդներ են, անոնցմէ մէկը Նաւասարդեանի աշակերտներէն է: Փշոտ է սակայն իրենց ճանապարհ. մաղթենք որ յաջողութեամբ պսակուին իրենց ջանքերը:

Շատեր քննադատեցին «Հայք» ի մէջ «Ապոլոնի որդի» ին հրատարակած յօդուածին այն մասը որով Ն. Աղազարմեանը գովուած էր: Այն մասը արդարև աւելի ճիշդ եղած կը լինէր եթէ սապէս ըսուած լինէր. Աղազարմեանի տնօրինութեան ատեն դպրոցը լաւ դպրոց չէր, բայց Աղազարմեան իւր հայկաբանութեամբ պատիւ կը բերէր դպրոցին:

ԿՐԹԱՍԷՐ

ԸՄԵՐԻԿԵՅԻ ՀԱՅՆԻՐՆ

ՎեՑ ՏԱՐԻ ՔԱՍԱԶ ԵՒ ԱՅԺՄ

Թուրքիոյ այլ և այլ ներքին Գաւառներէն յԱմերիկա եկող Հայերն ի հարկէ բոլորովին տարբեր, նոր աշխարհ մի եկած կը լինին. լեզուն նոր, սովորութիւնք տարբեր, զգեստ ու տեստ տարբեր, գործ տարբեր: Նոքա շատ բան կը տեսնեն ու կը սորվին մէկ տարուան մէջ, այնքան նոր բան որքան իրենց բոլոր անցեալ կենաց մէջ տեսած ու սովորած չէին իրենց բնիկ երկին մէջ: Այսպէս 4-5 տարի յԱմերիկա ապրող Հայերն զգալի փոփոխութիւն կը կրեն անգլալի կերպով: Նոցա ճաշակն մաքրութեան, ուտելու խմելու, հագուելու և մարդավարութեան մասին կամաց կամաց կը փափկանայ կը զարգանայ:

Մարդավարութեան մասին յատկապէս արժան է նկատել նոցա յառաջդիմութիւնը: Նոր եկող Հայէն ո՛րքան տարբեր է այն որ արդէն 5-6 տարի յԱմերիկա ապրած և գործած է:

Նոր եկողն երբ տան մի առջև հասնի երբեմն չգիտնար իսկ թէ ինչպէս պէտք է զանգակն հնչեցունել. երբ ներս կը

մտնէ, դիցուք թէ «բարլըր»ը առաջնորդեն զինք, գլխարկը վար չառնուր, ուրիշներ ալ, մինչև իսկ տիկիներ ալ վերայ թող հասնին, ինք գլխարկ ի գլուխ կը նստի կը սպասէ հոն:

Երբ հետք խօսիլ սկսի, բաւական ժամանակ պէտք է սպասես որ իմանաս թէ ո՛վ է և ինչ խնդրոյ համար եկեր է: Եւ խօսքին ու տեսութեան վերջը չգարձարդը կը կարծէ թէ քաղաքավարութիւնը կը պահանջէ որ նախ աւելորդ և ընդհանուր ուրիշ բաներու վերայ խօսի և յետոյ բուն իւր գործին կամ խնդրոյն վերոյ: Իսկ այս երկրին մէջ փոքր ի շատէ փորձառու եղած Հայը գիտէ թէ ատոր ճիշդ հակառակն է վայելուչ. երբ ներս կը մտնէ անմիջապէս կ'ըսէ—Ես այս ինչեան եմ, եկած եմ ձեռնէ խնդրելու որ Պատասխանդ կը լսէ, խօսքը կը վերջացունէ, և շնորհակալ եմ ըսելով կը թողու կ'երթայ, եթէ դու ուրիշ խօսք չբանաս:

Անգամ մի նորեկ երնտասարդ մի տարի ներկայացուցի ամերիկացի մէկ բարեկամիս, որպէս զի տեսնեմ կրնանք յարմար գործ մի գտնել նորա շնորհիւ: Երբ կէս ժամու տեսակցութենէ յետոյ վերադարձանք, իմ երիտասարդ հայրենակցին հետեւեալն ըսի.—Եղբայր, քեզ դիտողութիւն ունիմ ներկայեցնելու, կը յուսամ չպիտի ցաւիս, զի քո օգտին համար է: Մեր տեսակցութեան մէջ ընդ Ամերիկացւոյն գործեցիր երեք խոշոր սխալներ.—Նա բարձր դիրք ունեցող անձնաւորութիւն մ'է, դու գործ խնդրող երիտասարդ մի, բայց նա աւելի քաղաքավարութեամբ կը խօսէր քեզ քան դու նմա. նա քեզ ՍԸՐ (տէր) կ'ըսէր, երբ հարցում մի ուղղէր քեզ, դու նմա այդ կամ ոչ կը պատասխանէիր առանց ՍԸՐ տիտղոսով զինքը կոչելու: Նա ծանր էր և լուրջ, դու ժպիտ ի շուրթն կը խօսէիր, որպէս զի քո վեհափառութենէն չափազանց չպատկառի. և դարձեալ, իբր թէ իւր բարեկամ լինէիր, իւր ձեռք սեղմել ուղեցիր, որ անպատշաճ էր:

Երիտասարդն շատ շնորհակալ եղաւ ինձ, զի ինքն ուսեալ մէկն էր և կը փափաքէր ուղղուիլ, յառաջ երթալ: Բնաւ չցաւեցաւ իմ խօսքերէս:

Նոր եկած Հայերու մի մեծ սխալն ալ այն է որ չափազանց բարձր ձայնով

կը խօսին իրարու հետ, տան մէջ և փողոցին ու կառքին մէջ: Հասկացող օտարականն իսկոյն պիտի կրնայ ըսել թէ Հայերն անկիրթ են ուրեմն, վասն զի որոշ լսուելու աստիճանէն աւելի բարձր ձայնով խօսակցին կը ցուցնէ թէ խօսողներն վարժուած են երկու երեքն մէկէն խօսելու, և որպէս զի լսուին, պօռալ ասիականա՞ծ են: Տարրական կանոն մ'է որ մէկը խօսքն աւարտէ ու յետոյ միւսն սկսի խօսիլ: Բայց ինչպէս գրողներ կան որ կէտ դնել չգիտեն, խօսողներ ալ կան որ չեն գիտեր վերջացունել խօսքը. կարճ գրել ու կարճ խօսիլն ալ մեծ վարպետութիւն է, և յաճախ քայքայւարական պարտք: Ուրեմն երբ մի քանի Հայեր ի միասին են, պէտք է պատուաւոր մարդու պէս իրարու խօսք լսեն կարգաւ ու յարգանքով, և պէտք եղածէն աւելի ուժով չխօսին: Ամերիկայի մէջ Սեւերն միայն բարձր կը խօսին ու կը խնդան:

Թէքլիֆսիզութիւնը ըսուածն ալ սոսկալի անքաղաքավարութիւն մ'է զոր մոռնալու համար շատ դժուարութիւն կը կրեն նոր եկողներն: Դուռն չգարկած և «եկուր» պատասխանն չլսած՝ ի սենեակն մտնել, գրասեղանին վերայ գտնուած ձեռագիրներու, բաց նամակներու նայիլ իբր թէ կարդալ ուղեւով—մինչև անգամ այնպիսի թղթեր առնուլ և նայիլ, սենեկին չորս կողմը դառնալ բան փնտռողի հետաքրքրութեամբ, և այլ այսպիսի բաներ կ'ընեն շատ անգամ պարզմտութեամբ, առանց մտքէ իսկ անցունելու թէ անքաղաքավարութիւն է:

Քաղաքակրթեալ ժողովրդոց մէջ, և առաւել Միացեալ Նահանգաց մէջ քան յԵւրոպա թերեւ, «Թէքլիֆսիզութիւն» ըսուածը շատ նեղ սահմաններ ունի մինչև անգամ մտերիմներու շրջանին մէջ. բայց Հայերն երբ քիչ մը բարեկամանան, ամեն սահման անդին կ'անցնին. և երբեմն այնպիսի սահմաններ ու որ ամենէն մըտերմին ալ ներքի չէ: Լսած եմ թէ Հայ կայ որ ընկերին ձեռքէն նամակ յափշտակելով կը փորձէ կարդալ՝ մտերմութեան պատրուակաւ, թէ և գիտէ թէ ընկերին շատ անհաճոյ է այդ:

Բայց օրինակներուն վախճան չկայ. քաղաքավարութիւնը սիրոյ և յարգանքի անկեղծ գգացմանց վերայ հիմնուելով է որ կը լինի փափուկ և ճշմարիտ:

Քաղաքավարութեամբ վարուող մար-
դը ինքզինք ալ յարգած կը լինի այնքան
որքան զիւր ընկերը: Ուրախալի և քա-
ջալերական է յիշել թէ երբէք Հայ մի
տեսած չեմ որ սիրով ընդունած չլինի
երբ առիթ ունեցած եմ իրեն քաղաքա-
վարական խրատ մի տալու:

ՀԱՅ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԱԿՆՑԻՈՑ

ՕՐՕՐԻ ԵՐԳ

Օր օր օր օր Հայրիկդ ապրի,
Հայրիկդ ապրի մայրիկդ արևի,
Արևը քու տնակը ցաթէ,
Շարվիսը քու մարիկդ առնէ:

Օր օր օր օր այլիս ես,
Լաֆուռ շալի լայլիս ես.
Քանի նայիմ երեստ ի վեր
Դուն քուն չես ու այլիս ես:

Օր օր օր օր քուն ունիս,
Քաղքին մէջը տուն ունիս,
Մարգրտէն եսրդան ունիս,
Ճէվայրէն բարձ ունիս,

Աղուոր ես չունիս խալատ,
Քու էմմէն տեղդ է պէխալատ,
Մինակ մէկ խալատ մ'ունիս,
Քուն չունիս ւարթուն կու կենաս:

Աղուոր ես ոտքերդ ի վեր,
Ո՞վ բերինք քեզ խաղընկեր.
Բոլոր լուսընկան բերինք,
Լուսուն ասղը խաղընկեր:

Օր օր օր օր օրըդ շատնայ,
Օրըդ շատնայ, տարիդ մեծանայ,
Օրըդ շատնայ, տարիդ մեծանայ,
Անձիկդ Հազար բարու տիրանայ:

Օր օր օր օր աննըման,
Աննման վարդի նման.
Ուչ մարն է բերեր քեզի նման
Ուչ Արևն ուչ լուսընկան:

Օր օր օր օր քններ ես,
Ծածկեր իմ քրտըներ ես.
Շալ լաթիկըդ ետ տանիմ,
Վարդի նման բացուեր ես:

Կարմիր վարդ ու լան տերև,
Բացուեր ես մեր տանն ի վերև
Քանի կայ պաղչան տերև
Անքան կ'ուզիմ քեզ արև:

Ծոցիկս ի պարտէզ տ'անիմ,
Քեզ մէջը մրճիկ տի տնկիմ,
Աչքերս ալ աղբիւր տ'անիմ
Ունեցովս քեզ տի ջրիմ:

Ազգային

ԼՈՒՐԵՐ

ԴՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ Ի ՊԼՏԻԻ

Տփղիսէն Հասած վերջին թերթերէն
կը տեղեկանանք թէ մեր ողբացեալ Հրա-
պարակագրի մահաբեր եղող Հիւանդու-
թիւնն է եղեր թոքատապ (քնէօմոնի):
Արդէն անդառին յերիտաւարդական Հա-
սակէն ունեցած է նա երբեմն երբեմն ա-
րիւնթքութիւն:

Արծրունի մեռեր է Դեկտ. 31ին, 48
տարեկան: Նորա Հիւանդութիւն մի քա-
նի օր միայն տեսած և միայն վերջին եր-
կու օրերն ծանր երևոյթ առած լինելով՝
մահուան լուրն ահագին ցնցում յառաջ
բերած է ի Տփղիս, և յիրաւի բովանդակ
Հայ Աշխարհի մէջ:

Ազգը կը յուսայր Կեռ երկար տարի-
ներ վայելել իւր անխոնջ և արի աշխա-
տաւորն:

Երբ Արծրունոյ մահուան դոյժն Հա-
սաւ ի Բագու, ի թատրոն Հայ թատերա-
սէրների՝ ներկայք այնպէս յուզուեցան որ
խակոյն վարագոյրը վար իջեցունել տը-
ուին և առանց ստակները ետ պահանջե-
լու թողուցին թատրոնի զուարճութիւնը՝
լալու Համար մեծ Հայ գործիչին վերայ:

Հոգեբանական անհնարութիւն մ'է
այնպիսի սգայի յուզման մէջ այլ ևս միտ
և ունկն դնել թատերական ներկայաց-
ման:

Թաղման օրն, այսինքն կիրակի, Յուն-
վար 8ին, ահագին բազմութիւն Հայոց և
այլազգեաց մասնակցած է յուղարկաւո-
րութեան Հանդիսին: Բազում պատգա-
մաւորութիւններ ուրիշ քաղաքներէ եկած

են իբրև ներկայացուցիչ զանազան մարմնոց, ընկերութեանց և հաստատութեանց: Դամբանական ճառեր այնքան բազմաթիւ պարաստուեր են որ ժամանակ չէ եղեր ամենն լսելու: Ցաւակցական հեռագիրներու և պսակաց թիւն ահագին, անօրինակ է եղած:

Երախտագիտական զգացմանց այս ջերմագին արտայայտութիւնք մեծ մշակին վերաբերութեամբ՝ հայ ժողովրդային հասկացողութեան յոյժ խրախուսիչ մէկ նշանն են: Արծրունի մեծ պատիւ բերաւ մեր ցեղին և արժանի է որ նորա յիշատակ ամեն կերպով պատուելուի Ազգէն:

Արծրունիի վերայ կենսադրական տեսութիւն մի կը մնայ մեզ ընել «Հայքի» մօտաւոր թուերէն միոյն մէջ:

*

* *

Կարինէ առ Հնչակ ուղղեալ թղթակցութենէ մի կը տեղեկանանք թէ Կարնոյ Ագրակ և Վէքեղաս գիւղերէն 49 Հայեր տարիէ մ'ի վեր սոսկալի կերպով կը չարչարուին ու մէկ կողմէն կը մեռնին Կարնոյ բանտին մէջ՝ բոլորովին տարապարտուց: Չախալ օղլի Սալիհ Աղայ ոմն երեք Հայեր անտառին միջ կոտորած լինելէն ամիսներ յետոյ, վերոյիշեալ հայ գիւղերէն 8 ժամու ճանապարհ հեռուն իւր լազ թշնամիներէն սպաննուած էր, բայց կառավարութիւնն այնպէս կամք ըրած է որ այս սպանութիւնը Հայերուն վերայ բեռնայ և նոցա գիւղերն ամայի ընէ: Անմեղ բանտարկեալք պարզապէս կ'ըսեն թէ սպանման տեղւոյն աւելի մօտ, մէկ, երկու, երեք ժամ միայն հեռու գտնուող թուրք գիւղերու բնակչաց գիմեցէք, նոցա մէջ խղճամիտ մարդիկ կան որք կը վկայեն թէ լազերն մինչև անգամ իրենց տուններն գիշերած են: Բայց կառավարութիւնն ականջ չդնէր և անմեղներն չարձակեր:

*

* *

Եփրայտայ ափունքէն հետեւեալ քստմնելի լուրն հաղորդուած է հոս. — Տիրատուրեան Օհան անուն մէկը, որ իբրև հրէական կարկատ կը շրջէր գիւղերն, սճրագործ-

ներ բռներ մորթեր են զինքը ճիշդ իբրև ոչխար: Դիակը գտնուեր է Կաշոյի և Սըխ-ջորի ճամբուն վրայ:

**

Նոյեպէս Խարբերդու Խույլու գիւղացի չորս վաճառական Հայեր — Հաճի Գինոս Չանթոյեան, Մկրտիչ Թոփաղեան, Հաճի Խաչատուր Տէր Կարապետեան և Յովհաննէս Թաթոյեան — իրենց Կարինի ճամբորդութեան մէջ կը վիրաւորուին սուր կողտպտութիւն աւազակներէ, որոց գլուխը կամ առաջնորդն է եղեր Խույլուցի Մուսթաֆա: Դատ բացուած է:

*

* *

Հնչակէ կը տեղեկանանք թէ Կեսարիոյ մէջ վեց տուններ խուզարկուած են՝ Պոլսէն եկած հեռագրի մի վերայ, բայց փաստակար բան մի չեն գտած: Մատնիչն հայ է: Ենթակայք պատուոյ դատ բացած են:

*

* *

Լ'Արմէնիի Փետր. թուոյն մէջ հրատարակուած է պատճէնն Գամառ-Քաթիպայի մէկ նամակին, 1891ին գրուած առ Չերազ: Այդ նամակին մէջ հանգուցեալ բանաստեղծին սա խօսքը կայ. «ՀնՁԱԿի բռնած ճանապարհին ես չեմ հաւանիլ:»

*

* *

Նոր տարւոյ առթիւ Լայպցիկի համալսարանին Հայ, Ֆրանսացի, Անգլիացի, Գերմանացի և Յոյն Ուսանողներու մեծ թիւ մը շնորհաւորական ուղերձ մ'ուղղած են փրոֆ. Մ. Չերազի:

*

* *

Լ'Արմէնիէն կը տեղեկանանք թէ Հայաստանի և Կիլիկիոյ վերայ անգլիական Պլիու Պուքի մի հրատարակութեան, և Հայկական Խնդրոյն վերայ հարցապնդմանցի Խորհրդարանին՝ կը սպասուի:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Տիար Արամ Ավայտեան, որ թոքախտէ կը տառապէր ժամանակէ մ'ի վեր, նիւ Եորքի մէջ, Փետր. 8ին կնքեր է իւր փահկանացուն: Յուդարկաւորութեան հանդէսն կատարուեցաւ Ս. Թոմաս եկեղեցին, ամսոյս 11ին: Հանգուցեալն ագնիւ և համակրելի երիտասարդ մ'էր: Կը մաղթենք երկնից մխիթարութիւնն նորա վըտահար մօր և ամբողջ ընտանեացն համար:

*

* *

Փետր. 11 թուականով կը գրէ մեզ Տիար Լ. Ս. Լինէ.—

Երէկ ժամ չորսին ատենները, Հայումը և երկու Իռլանտացւոց միջև կռիւ մը տեղի ունեցաւ հոս, որուն նկարագրութիւնը լրագրի մէջ ալ կայ, միայն սատարբերութեամբ որ Հայը՝ փոխանակ դանակի իւր ուժեղ ձեռքերը գործածած է և ոչ առանց պատճառի, այլ կը տեսնէ թէ երկու Իռլանտացի ուրիշ Հայու մի վերայ կը յարձակին, ինքը անմիջապէս վերայ կը հասնի և քաջութեամբ կը պաշտպանէ իւր տկար աղգայինը. և որովհետեւ մատը մատնի մ'ունէր, տուած հարուածներն Իռլանտացւոյ երեսն արիւնթաթաւը բաժնէն: Այս քաջագործութիւնն ընող Հայուն անունն է Կ. Հէպէշլեան:

*

* *

Նիւ Եորքի մէջ Հնչակեան կուսակցութեան պատկանող մի քանի երիտասարդներու առաջնորդութեամբ ընդհանուր ժողովներ կ'ունենան Հայերն, երկու շաբաթը միանգամ, և կը լսեմք թէ բաւական կանոնաւոր են հաւաքումներն: Մի Բանիններ կ'ատենախօսեն, եւ յաճախ Հնչակ թերթէն կտորներ կը կարդան:

*

* *

Մեր Հայրենակից Ղազարոս Խալաճեան, Պոսթոնէն մեկնող հեծելաճուաւորներու խմբին մասնակցեր է և մրցանակ առնող-

ներու թուոյն մէջ յիշուած է տեղւոյն թերթերուն մէջ: Մրցումը 100 մղոն տեղ պայտիքով ճամբորդելու համար լինելով, 223 մրցակիցներու 175ը յաջողած են, որոց մէջ միակ Հայն է Տիար Խալաճեան:

*

* *

Լինի «Տէյլի Իվընինկ Այթըմ» թերթին մէջ կը կարդամք թէ քաղաքին «Արշալոյս Հայաստանի» ընկերութիւնը իւր մէկ ժողովոյ մէջ 10 տոլար հանգանակած է ի նպաստ այն յիշակերտին զոր Ամերիկացիք կ'ուզեն կառուցանել ի յիշատակ մեծահոգակ եպիսկոպոս Ֆիլիփս Պրուքսի, որ շատ անգամ համակրանք յայտնած էր Հայոց նկատմամբ:

Քաղաքական

ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէ Փետր. 10ին հետեւեալն կը հեռագրեն—

Միացեալ Նահանգաց դեսպանատունն ատտ իմացաւ թէ թուրք խուժանն այրեր է Աղջկանց Ամերիկեան Գոլէճն ի Մարսուան, վառն զի տնօրէնն, Մր. Հէրիք, կարծուած էր թելադրիչ Լինիլ քաղաքական յուզման մի: Յիրաւի քաղաքական յայտարարութեանց օրինակներ փակցուած էին գոլէճին պատերուն վերայ, բայց Տր. Հէրիք բացատրած էր փաշային թէ այդ պատահած էր առանց իւր հաւանութեան: Փաշան կա'մ անկարող կա'մ դժկամակ էր զգուշէճն պաշտպանելու, ըստ որում բնաւ ջանք չըրաւ իսլամ խուժանին դէմ պաշտպանելու զայն:

Այս մասին հետեւեալ խորհրդածութիւնը կ'ընէ Նիւ Եորքի օրաթերթերէն մին — վարժարանն հաստատուած էր իբր 20 տարիէ ի վեր, բայց այրած շէնքը նոր շինուած աւարտած էր մեծ ծախքով: Այս շէնքին հրկիզումը միակ բարբարոսութիւնը չէ զոր իսլամներն գործած են վերջին քանի մ'ամսուանս մէջ: Պուրատուրի մէջ ամերիկացի Պարթէթի տունն այրեցին (Գոնեայի կողմերն): Ապա ապօրինօրէն Մր. Միտի և Մր. Մարթինի ինչքը բռնեցին

երբ նոքո Ատանայէն ի Հաճին կ'ուղեւորէին: Աւելի նոր դէպք է Մր. Պեթիպոնի և Լիյի ձերբակալումն յԱտանա: Նշանակելի է թէ թրքական այս հարստահարութիւնք բոլոր գործուած են ներսերը, ուր օտար ազդեցութիւնը տկար է և թուրք կառավարութիւնը բացարձակ: Երբէք այսպիսի դէպքեր չենք լսեր որ տեղի ունենան ծովեզերեայ քաղաքաց մէջ, ուր կրնան մարտանակեր յղուիլ, կամ ի Սիրիա, ուր օտար տարւն շատ զօրաւոր է:

Տր. Պարթէթի դէպքին մէջ երբ Բ. Դուռն իմացաւ թէ ամերիկեան մարտանակեր կը դիմէին դէպ ի Զմիւռնիա, տուգանքն անմիջապէս վճարեց: Անտարակուսելի է թէ թուրք կառավարութիւնը լռեցեայն կը հաւնի Ամերիկացւոց դէմ եղած այս բարբարոս ցոյցերուն:—

Աղէկ է որ թուրք կառավարութիւնն ու տգէտ խուժանը հզօր օտարականաց ալ երբեմն ցուցնեն իրենց մոլեռանդ բարբարոսութիւն, որպէս զի հասկնան թէ մեք անպաշտպան ու տկար Հայերս պարապ տեղ չէ որ կը գանգատինք: Գործնական դատերն միշտ աւելի պարզ ու ազդու կը լինին:

*

* *

Սոսիալիզմ կամ Ընկերվարականութիւն կոչուած հայեցողութիւնն անցեալ օրեր տաք վիճաբանութեան նիւթ եղաւ Գերմանիոյ Ազգային Ժողովոյն մէջ և սոսկալի հարուածներ կրեց: Հէր Պէպէլ, ընկերվարական պետ, բացաւ վէճն ատենախօսութեամբ մի յորում ըսաւ, ըստ սովորութեան, թէ Ընկերվարականութիւնըն է անհատին ու ընկերութեան փրկութեան միջոցն:

Ուրիշ մ'ալ յայտարարեց թէ շուտով ընկերվարականութիւնը պիտի յաղթանակէ: Նշանաւոր անդամներ դէմ խօսեցան, որոց մին ցուցուց թէ ընկերվարականք լոկ բառեր կ'արտասանեն առանց նոյն իսկ շօշափելու այն գործնական կէտը թէ ինչպէս կրնայ ընկերվարականութիւնն վերակազմել զընկերութիւն:

Ուրիշ մի ծաղր ու ծանակ ըրաւ ընկերվարականութիւնը իբրեւ խաբէական բան որով ոմանք կը ջանան ռամիկներու բազմութիւնը խաբել, իրենք գիրենք ինք-

նակոչ առաքեալներ ներկայացնելով հարստահարելոց: Ըսաւ նաեւ թէ խորհող մարդոց մէջ ընկերվարական հայեցողութիւնք սնանկացեալ են. և ընկերվարական պետեր գիտնալով հանդերձ թէ իրենց տեսութիւնք անգործնական են, կը շարունակեն զայնս քարոզել որպէս զի պահանջն իրենց ազդեցութիւնը բազմութեան վերայ: Եւ դեռ ուրիշ մալ յայտարարեց թէ գործաւոր դասերն ալ սկսած են թափանցել ընկերվարական տեսութեանց անյատակ դատարկութեան մէջ ինչպէս և առաջնորդներու դաւանանքին անարժէք բնութեանը:

Փարիզի ԹԱՆ Լրագիրն ալ իւր վերջին թուերէն միոյն մէջ կը նշանակէ ընկերվարական պետերու այլանդակ հակասութիւններն, երկարօրէն պատմելով թէ ինչպէս քաղաքաց գործաւորներուն ինչ որ կ'ըսեն, մշակ գիւղացւոց ճիշդ անոր հակառակը կը քարոզեն:

*

* *

Սուլթան Համիտ, թէև սրամիտ մարդ, բուական նեղութիւն կը կրէ Եւրոպական հզօր տէրութեանց ամենուն ալ հաճելի լինելու համար: Երբ Գերմանական ընկերութեան մի սալ ուզէ երկաթուղւոյ գիծ մը շինելու արտօնութիւնը, անդէն Անգլիացիք դժգոհ կը մնան: Երբ Փռանսացի մը գործածէ զինուորական բարձր պաշտօնի համար, Գերմանացիք կը ցաւին: Երբեակ նիգակակցութեան պատկանող դեսպաններէն մին եթէ տեսութեան ընդունի, երկեակին պատկանողներէն մին ալ ետեւէն պէտք է ընդունի: Դժուար խաղ մ'է այն զոր Սուլթանը խաղալ ստիպուած է:

Պէնթիէ անուն Փռանսացի թոփահանէի կայսերական փամփշտանոցին վերատեսուչն էր, որու համար Գերմանացւոց գիւրազգայութիւնը վերաւորեալ էր, և կրկին ու կրկին գանգատեր էին թէ քանի որ գերման գործարաններ գէնք ու փամփուշտ կը մատակարարէին Թրքաց, չլինիր որ Փռանսացի զօրական մի այդ ամենը տեսնէ ու քննէ: Ասոր վրայ Մ Պէնթիէ յատուկ իրատեով կոչուեցաւ Սուլթանին անձնակազմ ծառայութեանը պատկանեալ երկրաչափի պաշպօնին, այն-

պէս որ փատիչաճը կրնայ այսուհետեւ ամեն տեսակ աշխատութիւն յանձնարարել նմա :

*

* *

Ռուսական կառավարութիւնը կաշխատի Ռուսիոյ հռովմէական և բողոքական եկեղեցիներուն վարչութիւնը իւր տեսչութեան տակ առնուլ :

*

* *

Մեծն Կլատսթըն իւլանտայի ինքնավարութեան ծրագիրն ներկայացուց իորհրդարանին երկու ժամ ատենախօսելով ցարմանալի կորովով ու պերճաբանութեամբ : Այդ ծրագիր թէև լինի քննադատելի, Կլատսթըն ինքն, 83 տարեկան հասակին մէջ, սքանչելի է առաւել քան երբէք, քանզի եզական քաջութեան, հաստատամտութեան, սովորութեան և խմացական ինչպէս և ֆիզիքական տարօրինակ ուժի փուռաւոր տեսարան մի ներկայացուց աշխարհի : Պապն անցեալ օր յիրաւի ըսած է. «Կլատսթըն և ես ենք քան զամենայն զառամեալ առաջնորդներն աշխարհի, և սակայն երկուքս ալ ունիմք քան զամենայն թարմ գաղափարներն :

Յայտնի է թէ Փռանսացիք խօսող ժողովուրդ մ'են, և քան զբոլոր ուրիշ ժողովուրդներն լաւ գիտեն խօսակցիլ : Կերելի թէ իրենց այդ բնութեան արդիւնքն է որ Փարիզ աւելի թերթ կը հանէ ի լոյս քան ուրիշ ուէ մեծ քաղքից յաշխարհի :

Նոր վիճակագրութեան մի համեմատ լոնտոն ունի 20 օրական թերթ, Պէրլին 16, Նիւ Եորք 18, իսկ Փարիզ 52 : Ի հաշիւ առնելով չաբաթաթերթերն, ամսագիրներն և բոլոր կանոնաւոր պարբերականներն, թիւն կը հասնի, Փարիզի համար 1998ի, և Փռանսական դաւառաց համար 3180ի : Այս թիւերն ահագին են : Գալով չըջաբերութեան խնդրոյն, Փարիզի «Փըդի ժուռնալը» մէկ միլիոն օրինակ կը հանէ, որ է հինգպատիկն Նիւ Եորքի Հէրալտին : Փարիզի 52 օրաթերթից միայն 5

կամ 6 հատն դրամ կը շահին, մնացեալը ծայրը ծայրին բերելու կ'աշխատին :

Անցեալ տարի կարդացինք թէ Աթէնքի օրաթերթք ալ տարօրինակ կերպիւ բազմաթիւ են : Այդ ալ զարմանք չէ, քանի որ գիտենք թէ Յոյներն շատախօսութեան (թերեւս նաև սրախօսութեան) մասին քան զֆրանսացիներն վար չեն մննար :

«Հայքի» մուտքն ի Ռուսիա ազատ է :

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերուն Հայրիկի : 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ :

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան : Բազում ձեւերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գաւաթեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք :

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէո կամ 5 ֆրանք :

ՀԱՅ ԲՈՂՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊՍԳԱՅՆ, 1888, նախապէս «Արեւելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան : Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

«ՀԱՅԲ»

Թղթակազմ

Ա. տարի 1 տոլար 50 սէնթ կամ 7 ֆր. 50ս.
Բ. տարի 2 տոլար կամ 10 ֆրանք

Մեծայարգ Տի. Մ. Չերազ իւր թերթի անգլիերէն հրատարակութիւնն գաղթեցուցած է չորրորդ տարւոյնսկիզբէն, և միայն ֆրանսերէն պիտի հրատարակէ «ԼԱՌԱՄԵՆԻՆ», ամիսն մէկ անգամ : Թերթին տարեկան բաժնեգինն է 3 տոլար 75 սէնթ կամ 18 ֆր. 75 սանթիմ : Հասցէն է.

33 DE VERE GARDENS, LONDON, W.
ENGLAND

THE WORCESTER MECHANICS
SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԵԲԵՆԻԲՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԵՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը ճարէ Յուն վար, Ապրիլ, Յունիս և Հոկտ. ամսոց կէսէն հաշուելով:

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Ք Ե Ղ Ե Ք Ո Ր Մ

(Հաստատեալ ի 1849)

56 Front St.

Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

A. A. McLAUGHLIN

137 MAIN ST.

WORCESTER,

MASS.

Ես բազում Հայ յաճախորդներ ունիմ և ամեն չարաթ երեկոյ հայազգի վաճառող մ'ալ կը պահեմ վաճառատանս մէջ որ անգղիերէն խօսելու անվարժ Հայերու կը ցուցնէ մեր ապրանքներն, որք են գըլխարկ, վերարկու, սոնազգեստ (փանթոն), գուլպա, շապիկ ևն. ևն. Մեր գին ամենուն համար մէկ է եւ չափաւոր է. եկէք եւ տեսէք:

NORBERT FRANCK

ԴԵՂԱԳՐՔ

311 7ր. Էվինիու

Նիւ Եորք

27ր. և 28ր. Փողոցներու միջև

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՐՔ

286, 7ր. Էվինիու

Նիւ Եորք

26ր. և 27ր. Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

Յակոր Էքիզեան Կարապետ Էքիզեան
348 Fountain Street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston, Mass

ԵՂՐԱՐՔ Յ. ԷՐԻՈՆՍ

Յովհաննէս Էքիզեան Գէորգ Էքիզեան
57 CaManTo Hann. Harpoot
Constantinople, Turkey. Turkey in Asia.

HOPKINS & ATKINS
PATENTS Washington, D. C. 20
years' experience
write for information



REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.

A RELIABLE REMEDY FOR

Indigestion, Bilioussness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.

Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.

Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.

Ripans Tabules cure headache.

Ripans Tabules cure constipation.

Ripans Tabules : for sour stomach.

Ripans Tabules : for liver troubles.

Ripans Tabules : a family remedy.

RONOFF & OLDSSEN

FINE CUSTOM TAILORS
And Dealers in

GENT'S FURNISHINGS

ԴԵՐՁԱԿ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԱՎԱՃԱՌ

214 Main St.

WORCESTER

MASS.

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ. Ս. Գ Ա Ք Ր Ի Է Լ Ե Ա Ն